ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
Արտիմետի
գյուղապետարան

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
Армавирский марз
община с. Артимет

057 կոդ 04704111

Հասցե Արմավիրի մարզ
գյուղ Արտիմետ
Հեռ. 4 - 76 - 01

N 32

04 հուլիսի 2012 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՊԱՐՈՆ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

ՀԱՐԳԱՐԺԱՆ ՄԱՐԶՊԵՏ

Հայտնում ենք Ձեզ, որ Արմավիրի մարզի Արտիմետ համայնքում 2012 թվականի հունիս ամսին ընդունվել է համայնքի ղեկավարի մեկ որոշում , իսկ կարգադրություն չի արձակվել :

Առդիր 2 թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Զ. ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մուտքագրման թիվ 6026-12
«04» 07 2012 թ.

Հ Հ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
Արտիմետ համայնքի ղեկավարի
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N -----5-------

«----26----» հունիսի 2012 թ.

Հասցե. Արմավիրի մարզ
գյուղ Արտիմետ
Հեռ. 4-76-01

Արմավիրի մարզի Արտիմետ համայնքի
քաղաքացիական պաշտպանության պետի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 26.06.2012թ. <<Արմավիրի մարզի քաղաքացիական պաշտպանության համակարգի պատրաստականության բերման>> վերաբերյալ թիվ 2 որոշումը.

Որոշում եմ՝

1. Արտիմետ համայնքի քաղաքացիական պաշտպանության համակարգը <<Բարձր>> պատրաստականության աստիճանի բերելու նպատակով.

1.1 Հանձնարարել համայնքի ՔՊ շտարին՝
- սահմանել ղեկավար կազմի շուրջօրյա աշխատանքային ռեժիմ և աշխատատեղերում ու կառավարման կետերում՝ շուրջօրյա հերթապահության,
- ստուգել կապի և ազդարարման համակարգի պատրաստականության վիճակը, մարզի ՔՊ շտաբ ներկայացնել հայտ անհրաժեշտ լրացուցիչ կապուղիների վերաբերյալ,
- իրականացնել քաղաքացիական պաշտպանության պլանի ճշգրտում,
- պատսպարվողների ընդունման համար նախապատրաստել առկա պաշտպանական կառույցները, իրականացնել բնակչության ամրագրման հաշվարկների ճշգրտում,
- նյութական միջոցների պաշարների, ջրային ռեսուրսների և ջրային համակարգերի /ջրաղբյուրներ, արտեզյան հորեր, ՕԿՋ-ներ/ պաշտպանության միջոցառումների նախապատրաստում,
- լուսաքողարկման ռեժիմի ապահովման նպատակով նախապատրաստական միջոցառումների իրականացում,
- հատուկ կարևորության և արխիվային փաստաթղթերի նախապատրաստում՝ պահպանման հանձնելու համար /եթե այդպիսիք կան/,

1.2 Տարհանման հանձնաժողովի նախագահին՝
- նախապատրաստել տարհանման հավաքակայանները և նստեցման կետերը, ճշտել տարհանման և տրանսպորտային միջոցների հաշվարկները

1.3 ՔՊ ծառայությունների պետերին և կազմավորումների հրամանատարներին՝

- ճշտել ՔՊ կազմավորումների կազմերը, անհրաժեշտ գույքով և տեխնիկայով հագեցվածությունը, հնարավորինս համալրել և անհրաժեշտության դեպքում հայտ ներկայացնել մարզի ՔՊ շտաբ՝ գույքի և տեխնիկայի պահանջարկի վերաբերյալ,
- կազմակերպել մարզի ՔՊ գույքի պահեստներից անհատական պաշտպանության միջոցների տեղափոխում բաշխման կետ և բաշխման նախապատրաստում,
- գյուղատնտեսական կենդանիների և բույսերի պաշտպանության միջոցառումների նախապատրաստում,
- ճառագայթային և քիմիական իրավիճակի դիտարկումների նախապատրաստում,
- հակահրդեհային կանխարգելիչ միջոցառումների կազմակերպում,

2. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Արտիմետ համայնքի քաղաքացիական պաշտպանության պետ,

համայնքապետ՝ Զ. ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ

1.